

միջնորդացն հաշտեցուցին զնա, եւ նա հարկ եղեալ ի վերայ՝ զնալ յԵրուսաղէմայ եւ այլ զնոյն ոչ առնել: Զոր եւ յԵրուսաղէմայ եւ զնոյն գործն ոչ եթող. եւ առեալ զայն բաղադրեալ Մեկնիչն ի ձեռն եւ զբազումս ի սարղամտաց ձգեաց ի շիրթեալ յաղանդսն²⁴ յայնոսիկ եւ ի հերձիկ դաւանութիւն. զի նա հմուտ էր Քաղկեդոնի կրօնիցն:

Եւ զարձեալ իմացիք որ կու լսեմ — թող զնոցա բանն— այլ աւելի եկամուտ բան առնէք. կանանց իշխանութիւն էք տվեալ, որ յեկեղեցիս համադասս կանգնին ընդ քահանայսն. եւ յատեան աւետարանն ընթեռնուն եւ ի բեմն ելանեն խնկարկութիւն առնեն ի մենաստանս իւրեանց, որ յայտնի հերձուածն Պիպիկիանացոց: Ով սիրելիք, ո՞չ էք ընթերցեալ զգիրս կանոնաց հարցն եւ կամ զքարոզ կրօնաւորացն որ ասէ. Որ ոչ թողցէ զհայր կամ զմայր, թէ որքան նդովէ զմիակէցն որ Աւետարան ընթեռնու եւ կամ ի բեմն ելանէ, եւ կամ խունկ արկանէ եւ կամ քարոզէ. եւ որ ինչ գործ է քահանայից կամ սարկաւազաց՝ գործել զայս արանցն²⁵, ասէ, որ մարդիկք են. ապա քանի՞ եւս առաւել կանանց պարտ է ի յայդպիսի գործոյն հրաժարել եւ հեռի կալ եւ չմերձեանալ, որ ամենեւին խորթ է եւ հակառակ եկեղեցեաց ուղղափառաց: Ով սիրելիք, բազում անգամ գրով եւ յանդիմանելով ծածուկ եւ յայտնի

²⁴ Զ. յաղանդնն:

²⁵ Պէտք է լրացնել անպատշաճ է, ասէ: